

ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐԵԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍՈՒՄ

Սույն թվականի հուլիսի 27-ից օգոստոսի 8 օրերին Արգենտինայի մայրաքաղաք Բուենոս Այրեսում տեղի ունեցավ ԵՀԽ-ի Կենտրոնական Կոմիտեի հերթական նստաշրջանը:

Նստաշրջանի գլխավոր նպատակն էր Կենտրոնական Կոմիտեի անդամների միջոցով ԵՀԽ-ի անդամ Եկեղեցիներին ծանոթացնել Լատինական Ամերիկայում և հատկապես Արգենտինայում ապրող ժողովուրդների ներկա կյանքի պայմաններին և այդ երկրների Եկեղեցիների գործունեությանը: Ժողովի գումարման նախօրեին քսանմեկ էկումենիկ խմբեր շրջել էին Լատինական Ամերիկայի վանական երկրներում (Էլ Սալվադոր, Հոնդուրաս, Նիկարագուա, Կոստա Ռիկա, Պերու, Բոլիվիա, Չիլի, Պարագվայ, Ուրուգվայ, Բրազիլիա, ինչպես նաև Արգենտինայի տարբեր շրջանները) և այցելություններ տվել այդ երկրներում ապրող Եկեղեցիներին: Այս այցելությունները հարուստ փորձառություն էին ընծայել թե՛ այցելուներին և թե՛ հյուրընկալներին ու հանդիսացել Եկեղեցիների միջև փոխանակված «կենդանի նամակներ»:

Մեծապես տպավորիչ էին Բուենոս Այրեսի Եկեղեցիներին տրված այցելությունների անդրադարձները: Ժողովի մասնակիցներին խորապես հուզեցին այն տպավորությունները, որ նրանք ստացան անցած տասնամյակի ընթացքում Արգենտինայում տեղի ունեցած իրադարձություններից տուժած մարդկանց վկայություններից, երբ Արգենտինան զինվորական տիրակալության տակ հեծում էր, և շուրջ 30.000 մարդիկ անհետ կորել էին, ու երկիրը տնտեսական քայքայման եզրին էր հասել: Այս տխուր տպավորությունները մասամբ չքացան հանրապետության պրեզիդենտ դոկտ. Ռաուլ Ալֆոնսինի կողմից արտասանված խոսքերից (Կենտրոնական Կոմիտեի նստաշրջանին հրավիրված), որոնք Արգենտինայի ապագայի նկատմամբ լավատեսություն ներշնչեցին ժողովի մասնակիցներին:

Կենտրոնական Կոմիտեի սույն ժողովի նշանաբանն էր՝ «Աստուծո արդարությունը— խոստում և իրագործում»: Այս թեմայի շուրջ աստվածաշնչային խորքով պատրաստված ներածական խոսքով հանդես եկավ Ստոկհոլմի եպիսկոպոս Քրիստեր Ստենդալը: Վերոհիշյալ թեման ավելի մանրամասն ուսումնասիրման և խորհրդածության առարկա դարձավ ենթախմբերի հանդիպումների ընթացքում հետագա օրերին:

Նստաշրջանում Կենտրոնական Կոմիտեն խմբագրեց մի շարք նամակներ և հայտարարություններ. դրանցից են՝ ՄԱԿ-ի հիմնադրման քառասնամյակին նվիրված հայտարարությունը, Հարավային Աֆրիկայի ապարտեիստներին վերաբերվող հայտարարությունը, Կենտրոնական Ամերիկայի Եկեղեցիներին ուղղված հովվական թուղթը, միջազգային պարենավորման անկանոնությանը վերաբերվող հայտարարությունը, վարգացող երկրների կուտակված պարտքերի մասին հայտարարությունը, Արգենտինայի բնակիչներին և Եկեղեցիներին ուղղյալ պատգամը, Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու եպիսկոպոսների արտահերթ Սինոդին ուղղված գիրը, ինչպես նաև Մերձավոր Արևելքի անդամ Եկեղեցիներին ուղղված նամակը:

Ժողովի ընթացքում ընթերցվեց «ԵՀԽ-ի դերը միջազգային հարցերում» վերնագրով փաստաթուղթը, որը պատրաստել էին ԵՀԽ-ի Գործադիր Կոմիտեն և միջազգային հարցերով զբաղվող բաժինը: Կենտրոնական Կոմիտեի քննարկմանը ենթարկված սույն փաստաթուղթը որոշվեց ի գիտություն և ի քննարկումն ուղարկել բոլոր անդամ Եկեղեցիներին:

Ժողովի ընթացքում ներկայացվեցին երկու կարևոր զեկուցումներ. առաջինը վերաբերում էր «Երիտասարդներին նվիրված միջազգային տարվան», իսկ երկրորդը՝ «Կանանց նվիրված տասնամյակի» ավարտին: Այս վերջին հարցը քննարկվել էր Նայրոբիում, ուր ոչ-կառավարական մակարդակի կազմակերպություններ գումարել էին մի հանդիպում, որին նախագահել էր ԵՀԽ-ի նախագահներից տիկ. Նիդա Բարրոն:

Նստաշրջանում որոշումներ ընդունվեցին հինգ կարևոր խորհրդակցություններ գումարելու մասին, սկսած սույն թվականից մինչև ԵՀԽ-ի 7-րդ համագումարն ընկած ժամանակաշրջանը (1991 թ.): Այս հինգ հանդիպումների ընթացքում քննարկվելու են ԵՀԽ-ի գործունեության տարբեր երեսները և ծրագրեր են մշակվելու նրա ապագա աշխատանքների վերաբերյալ: ԵՀԽ-ի Գործադիր Կոմիտեն իր հաջորդ ժողովում, որը գումարվելու է 1986 թվականի մարտին Զահրում, որոշելու է վայրը և ճշգրիտ օրն ու ամսաթիվը 1991 թվականին տեղի ունենալիք համագումարի:

ԵՀԽ-ի Կենտրոնական Կոմիտեն իր առաջիկա ժողովները գումարելու համար հրավերներ էր ստացել հետևյալ վայրերից. 1988 թվականի օգոստոսի 11—22-ի համար՝ Արևմտյան Գերմանիայից, իսկ 1989 թվականի հուլիսի 16—27-ի համար՝ Մոսկվայից: Նախատեսվում է Կենտրոնական Կոմիտեի երկու ժողովներ գումարել 1987 թվականի հունվարի 14—26-ը և 1990 թվականի հուլիս ամսին ԵՀԽ-ի Ժնևի կենտրոնում:

Ժողովի ընթացքում ԵՀԽ-ի կազմում ընդունվեցին հինգ նոր Եկեղեցիներ իբրև լիիրավ անդամ և երկու Եկեղեցիներ՝ իբրև թեթակից անդամներ:

ԵՀԽ-ի Գործադիր Մարմինը և Կենտրոնական Կոմիտեն իրենց հանդիպումների ընթացքում մի շարք նշանակումներ կատարեցին ԵՀԽ-ի պաշտոնեության կազմում: Աշխարհի երիտասարդ կանանց կազմակերպության գլխավոր քարտուղար տիկ. Ռութ Սովիկը նշանակվեց ԵՀԽ-ի գլխավոր քարտուղարի օգնական՝ այդ պաշտոնում փոխարինելով Դր. Արի Բրավերին:

Բուենոս Այրեսի սույն ժողովը հանդիսացավ հոգևոր լիցքավորման, Եկեղեցիների եղբայրական գործակցության, ինչպես նաև հանուր մարդկության հարցերով մտահոգվելու և նոա բարորության համար աշխատելու թանկագին մի առիթ:

ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՉԱՊԱԼՅԱՆ
ԱՆԴԱՄ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ